

Մենք կարող ենք սակայն որոշ չափով մտանալ կրթութիւն խօսքի ընդունուած իմաստին, եթէ ընդունենք սահմանափակ և ընդարձակ կրթութեանց մէջ եղած տարբերութիւնը (մենք այս բաժանումը գերազատում ենք կրթութեան համար գործածական դարձած բարձրագոյն և ստորին բաժանումներին)։ Կրթութեան ընդարձակութիւնը կախուած է իրականութեան այն շրջանի մեծութիւնից, որի հետ հոգին յարաբերութեան մէջ է մտնում։ Այս տեսակետից ճշմարիտ որ մեծ զանազանութիւն կայ մի զիւրացու, որ երբեք իւր հայրենիքից դուրս չէ եկել և մի մարդու մէջ, որ «չառ մարդիկ քաղաքներ է տեսել և բարքերի հետ ծանօթացել»։ օրագրաբանով բանող մի մշակի որ զիւրական դպրոցում միայն կրօնագիտութիւն է սովորել և մէկ ուրիշի մէջ, որ զիմնազխայում և համարարանում լեզուագիտութիւն և պատմութիւն, բնական գիտութիւններ ու փիլիսոփայութիւն է սովորել։ Այն նիւթը, որ ունի երկրորդը իւր հոգու կրթութեան համար, աշխարհի և կեանքի մասին ինքնուրոյն դադափար կազմելու համար, անհամեմատ աւելի հարուստ է։ Աչքի առաջ ունենալով հէնց այս վերջին հանգամանքը, սովորական խօսքով կրթուած է կոչուում միայն նա, ով դպրոցական ուսման, ծանադարհորդութեան և հասարակութեան մէջ վարած կեանքի միջոցաւ, բազմատեսակ յարաբերութեանց մէջ է մտել աշխարհի և մարդկանց հետ։ Բայց այս դէպքում այն հանգամանքի վերայ թէ արդեօք նորա ներքին կեանքը որ և է օգուտ ստացել է դորանից թէ՞ ոչ, քիչ է ուշադրութիւն դարձուում։ Իսկ մենք ընդհակառակը կասենք, կրթուած ասելով նախ և առաջ հասկանում ենք իւր ներքին բովանդակութեամբ զարգացած, ինքնագոյ հոգեկան կազմ. նեղ մտքով կրթութեան համար, ինչպէս սովորական խօսքի մէջ հասկացուում է, բացի սրանից պահանջուում է նաև ընդարձակ յարաբերութիւն իրականութեան հետ. յատկապէս ընդարձակ յարաբերութիւն հոգեկան պատմական կեանքի հետ։ Մարդու կրթութիւնը այնքան ընդարձակ է և այնքան հաստատուն, որրան բաղմակողմանի է նորա գիտութիւնը և

որքան նա խորն է ըմբռնում մարդկային արարքները։ Առանձին մարդու հոգին յայտնուում է միայն այն ժամանակ, երբ համաշխարհային հոգու հետ շփման մէջ է մտնում, որ դարգանում է մարդկութեան պատմական կեանքի մէջ։

Այս տեսակետից մեզ համար հասկանալի կլինի թէ ինչո՞ւ սովորական խօսքի մէջ կրթութիւնը աւելի սերտ յարաբերութեան մէջ է դրուում գրականութեան և գեղարուեստփիլիսոփայութեան և բանաստեղծութեան հետ, քան բնական գիտութիւնների և մաթեմատիկայի հետ, քան քաղաքական և անտեսական կեանքի հետ։ Առաջիններում ազգութեան հոգևոր կեանքը աւելի ազատ և սկզբնական ձևով է արտայայտուում։ Մոյսպէս այստեղից հասկանալի է դառնում թէ ինչո՞ւ լեզուների գիտութիւնը յաճախ իրր չափ է ընդունուում կրթութեան համար։ Իր և է լեզուի գիտութիւնը մեր և այն ազգի մէջ, որ այդ լեզուով է խօսում յարաբերութիւն է մտցուում։ Այս պատճառով մի նոր լեզու սովորել նշանակում է բարեկրթութեան թագաւորութեան նոր սահմանի մէջ մտնել։ Այսպիսով կրթութեան վերջնական նպատակին հասած կլինէր այն մարդը, որը կարող կլինէր ասել իւր մասին թէ ոչ մի մարդկային բան նրան անծանօթ չէ. մի նպատակ որ իսկապէս անհասանելի է և Փառասփյանկութեան առարկան է։

Ինչ որ տուած է մարդկային ցեղին «իմ մէջ վայելել կուզեմ ես ինքնին»։

(Նարեկի էջ 11)



ՎԱՐԴԳԷՍԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Վաղարշապատ եւ իւր առասպելը — Ըստ պատմական տեղեկութեանց Բ. դարում Բ. յ. հռոմայեցիք, երբ պարթևների հետ կռուելով առնում են Հայաստանի մայրաքաղաքն Արտաշատ և աւերում (163 թ. Բ. յ.) շինում են մի քաղաք, ուր պահում են զժ

րեղ բերգասպահ զօրք (գառնիզոն): Այս քաղաքը՝ որ շուտով այնուհետև հռոմայեցիք այնտեղ ծագած մի ժողովրդական ապստամբութիւն զայնուց յետոյ, հրատարակում են իբրև Հայաստանի գլխաւոր քաղաք, կոչուում է Նոր Բաղաք, ¹ անշուշտ հին մայրաքաղաքի Արտաշատի նկատմամբ, որից և շատ հեռու է: Սակայն շատ չէ անցնում: Նոր Բաղաքը կոչում է և Վաղարշապատ: Ըստ Խորենացու (Բ. կե.) հայոց Վաղարշ թագաւորը (190-210 թ. Բ. յ.) պատեաց պարսպաւ և զճոր աւանն Վարդգէսի: պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ և անուանեաց Վաղարշապատ: որ և Նոր քաղաք: Խորենացու այս պատմութիւնը թէ Վաղարշապատը Վաղարշ թագաւորի անունով է կոչուել՝ անհիմն և շինովի համարել կարելի չէ: քանի որ Նոր Բաղաքի Վաղարշապատ անունը կայ և քանի որ իրօք Բ. դարի վերջում և Գ. դարի սկզբում Հայաստանում թագաւորել է Վաղարշ: ² Եթէ Նոր Բաղաքը կրում է Վաղարշ թագաւորի անունը, կրնանակէ նա որևէ ձևով աշխատել է այդ քաղաքը բարձրացնելու ու մեծացնելու համար:

Ազաթանգեղոսի մէջ Վաղարշապատը բերդաքաղաք է և միանդամայն մայրաքաղաք Գ. դարի առաջին կէսից արդէն. Խոսրով և Տրդատ թագաւորներն այդտեղ են նստում (Կր. 26. 30. 80): «Ս Վաղարշապատ, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց» (Կր. 96): «Ղօղեալ էին յարքայական կայանին՝ ի նմին թագաւորաց ի Վաղարշապատն քաղաքի» (Կր. 99): Սակայն ինչպէս երևում է, Արտաշատը դեռ չէ ընկնում. Վաղարշապատի հետ Ազաթանգեղոսի մէջ յիշուում է և Արտաշատը թէ իբրև բերդ և թէ իբրև կրօնական կետրոն: Բիզանդի մէջ (Գ. դար. Ը. գլ.) Տրդատի որդին Խոսրով Գ. դարում, ինչպէս երևում է, Արտաշատում էր նստում և այստեղ, «մինչև ի դաշան Մեծամծով ի բլուրն որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հելւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Ար-

տաշատու: նա տնկել է տալիս անտառ: շինուում է պապարանսն արքունականս: Տիրան թագաւորը (Գ. դար. ԺԲ. գլ.) Արտաշատից ընդառաջ է ելնում Թուսիկ կաթողիկոսին և «մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին դառնային. և նստուցանելին զցանկալի մանուկն Թուսիկ յաթոռ հայրապետական: Վաղարշապատն ուրեմն մի առ ժամանակ իբրև մրցակից է հանդիսանում Արտաշատի դիմաց, և այնուհետև դարձեալ բարձրանում է Արտաշատն ու յետոյ Դուինն Արտաշատի մօտ:

Արտաշատն ունէր անցեալ և պիտի պարծինար իւր հնութեամբ, հիմնադիր ունենալով հայոց հին թագաւորներից Արտաշէսին: Ծառ բնականօրէն արտաշատոց մրցակից վաղարշապատցիք ևս պիտի աշխատէին իրենց Նոր Բաղաքի սկիզբը հին ցոյց տալ և կայել որևէ հին հայ թագաւորի անուան հետ, ճիշտ ինչպէս մեր իշխանները ձգտում էին իրենց ցեղի հնութիւնը ցոյց աւելու՝ այս կամ այն թագաւորից սերուած համարելով իրենց: Արտաշատն ունէր իւր հիմնարկութեան առասպելը, նոյնը պիտի ձգտէին ունենալու և վաղարշապատցիք: Նոր Բաղաքը կոչումը ինչպէս և Վաղարշապատ, շատ նոր էր և չէր կարող նոցա համար պատիւ լինել և առասպելի նիւթ տալ: Հետեւորար Վաղարշապատի առասպելը պէտք էր կայել մի հին անուան հետ, մի այնպիսի անուան հետ, որ միանգամայն առնչութիւն ունենար Վաղարշապատի հետ: Այդ անունն է Վարդգէսի աւան, որ, ըստ Խորենացու, Վաղարշապատի հին կոչումն է: Առասպելը շինուած է Վարդգէս մանուկի վրայ:

Առասպելի մէջ պատմում են թէ Վարդգէս մանուկը հատուած գնացեալ ի Տուհաց գաւառէն, գալիս նստում է Ծրէշ բլրի Արտիմէդ քաղաքի. Բասագ գետի մօտերը «կրուել կոփել զգուռն Նրուանդայ արքայի»: Ծա կին է առնում թագաւորի քրոջը և շինում իւր անուեով աւանը, որի մէջ Տիգրան թագաւորը հրեայ զերիներ է բնակեցնում և աւանը մեծանում է:

Ծախ նկատենք, որ «կռել կոփել զգուռն մի անմիա բան է թարգմանել te-сать да ваять врата, ինչպէս անում է պ. Խալաթեանն ըստ էմինի: Կռել կոփել նշանա-

1. Римская история Θ. Моммсена, т. V. Москва 1885, стр. 397.
 2. Պատարշեան. Գեճ. պատմ. Հայոց. Բ. Կր. 263 հա.

կուժէ պարզաբար թահելէ ճեճել, իսկ մէկի գուռը թահելէ ճեճել, ինչպէս զիտենք, ցարդ ևս մի քանի տեղ հայոց մէջ նշանակում է մէկի աղջիկն ուզել: Այդ մի դարձուած է, որ երբեք հին սովորութիւնից և ծագում մեր հեքսթեների մէջ ցարդ ևս թագաւորի աղջիկն ուզելիս խնամասօսը գնում թագաւորի դուռը ծեծում է եւ նստում դռանը «խնամասարի» վրայ, որ նշան է թէ աղջիկն ուզում են: Ուրեմն կոել կոսիկը զգու՛ն ծրու անգոյ արքայի նշանակում է աղջիկն ուզել: Պ. Խալաթեանն այս սուսպիլը շինծու է համարում, որովհետեւ Վարդգէս անունը ինչպէս և Արտիմէզ քաղաքը, բարձրովին անյայտ է, մեր մատենագիրներին և յոյն ու հռոմայեցի պատմիչներին ուստի և Խորենացու «հնարածն են այդ անուններն» և սուսպիլը: Սակայն այդ դատողութեան հիմքը սխալ է: Եթէ այդպէս դատելու լինինք, սուտ և հնարովի կարելի է համարել շատ ու շատ բան ոչ միայն մեր, այլ և ամենայն ազգերի մատենագիրներին մէջ: Միթէ քիչ բան կայ այս կամ այն պատմագրի մէջ, որ ուրիշները չեն յիշում: Պ. Խալաթեանը միշտ այնպէս է դատում, թէ ինչ որ Խորենացուց առաջ (դներով Խորենացուն ամենավաղը Ը. դարու վերջում և Թ. դարու սկզբում) յիշուած կայ Խորենացին ուրիշներից է առել և սարքել, ինչ որ Խորենացուց յետոյ է յիշուած կամ կայ Խորենացուց են ուրիշներն առել և կամ նորա ազգեցու թեան տակ է շինուած: Իսկ ինչ որ Խորենացու մէջ կայ և ուրիշ տեղ չկայ, կամ պ. Խալաթեանն ինքը չգիտէ թէ կայ թէ չկայ, այդ էլ սուտ է և Խորենացու շինածը: Այսպէս Վարդգէսի աւան Արտիմէզ քաղաք ուրիշները չեն յիշում: Քասաղ գետը միայն Ասողիկն է յիշում, այն էլ Խորենացուց առնելով: Իսկ Երեւնը ընդրը—թէ պէտեւ Հայաստանում չորս (?) Երեւն ընդր են յիշում, բայց ոչ մէկը Վարդաշատի մօտ է: ¹ Ապա

ուրեմն, ըստ պ. Խալաթեանի Խորենացու հնարածն են Վարդգէսի աւան Արտիմէզ քաղաք, Քասաղ գետ և Երեւն ընդր: Զարմանալի մարդ է այդ Խորենացին որ գրչի մի շարժումով, առանց սրեւ է կարիքի ոչ միայն մի զոգրդականն սուսպիլ է ստեղծում, և մի ծրուանց թագաւոր և նորա փեսան Վարդգէս մանուկ, այլ և չորս հինգ աշխարհագրական անուններ՝ Վարդգէսի աւան Արտիմէզ քաղաք, Քասաղ գետ, Երեւն ընդր, այլ և մի խորհրդաւոր (тайнственный) Տուհաց գաւառ: Եւ գիտեք, այդ անունները նա Ափրիկայի խորքում Սահարայի անապատի համար չէ ստեղծում, որ ոչ որ չկարողանայ սուտ խմանալ, այլ Վարդաշատի համար որ Ք. դարուց Բ. յ. Հայաստանի մայրաքաղաքն է եղել իսկ Գ. դարուց մինչև այժմ, բացի այդ և հայոց կրօնական կեդրոն է դարձել, և Ը. դարում աւելացնենք մենք, նոյնպէս նշանաւոր է

իննի կարմիր, վաւեղի կարմրակոյ սուսպարէն և զոյց լոցին մակադասեղ խաշանց: Զոյցեմէն և Աշխան ումնից է առնում, բայց յիշած բնութեք, բազում մղակօք հետեւ լին Վարդաշատից, այլ շատ մօտիկ Ս. Էրմիածնի անասից ոչ աւելի քան 1 1/2 վերս: Միայն այդ բնութեք Երեւն անուն լին կրում այժմ: Վարդաշատից, որքան հարցաւորեցի խաշանի, ի հետոյ մի միայն Երեւն բնութեք և այդ բնութեք այժմեան գիւղից հիւսիս է ընկնում: Բասն և հիւց արտի առաջ քաւակաւ մեծ և բարձր հողաբնութեք է, բայց այս արտիների ընթացում գիւղացիք բլրի հող շարունակ կրում են արտեւն ու այցները՝ պարտասցանու համար, և բնութեք հետեւեւ կ: Շատ հետաքրքիր կրիներ այդ Երեւն կրում բլրի կազմութեանն ուսումնասիրել, բնութեք ինչպիս կրում է, քակակ լի այլ արտեւսակաւ և ծառայելի իրեւ գերեզմանասուն միջից կրիներ, ինն անոթներ և իրեղիներ շատ են դարեւ կելի: ամբողջ կազմում է քազմակաւ նիւթերից, գոյնզոյն շերտերով մեծ կանակաւորութեամբ լցուած, որոնց մէջ միայն մեծ տեղ է ընկնում: Այս բնութեք միայն որ ինն արտեւսակ լինելը պարզ կրում է, այժմ յայցնի է Երեւն անունով: Սակայն պե՛տ է կիսակ, որ Խորենացու մտազգիների մի կայ և Երեւն բնութեք ընթացումը այնպիս որ նախ պե՛տ է որոշել՝ Երեւն բլրի թեքերի մասին խօսք պիտի լինի:

1. Այս «խորհրդաւոր Տախաց գաւառն» այնքան էլ կասկածելի չէ պ. Խալաթեանի համար և կարող է Խորենացու ստեղծածը լինել, զի խորհրդաւոր կամ գաղտնիք զեղ է պ. Խալաթեանը: Այդ անունն մեջ նա սեւեւում է Բուսակի Մեծ և Փոքր Տու (=Տար, Տուաց) գիւղերի անունները, որ յիշում են Փարսեցիկն և Սերքուս, միայն Դու մեծով:

1) Պ. Խալաթեանը կրում է անուն Աշխանի Աշխարաս, ևր. 204, որ կարդում ենք. «Երեւն ընդր ըստ այժմու գիտութեան քակակաց կոսեւեցն» ոչ մի, այլ գէր չորս են, բայց քազում մղակօք քաւակաւ յի վարդաշատեւ ընդ արտեւսուս յանկի Մեծատորի և կոյնի Երեւն բնութեք, վասն առաստրեամբ բուստցանելոյ գրանշարն շեք և բոխ. իսկ յայլագնաց կոյնի Գրչար, լայն-

եղևի երբ մեր կաթողիկոսները առանձին խորհրդով առարկան է եղել հոյակապ եկեղեցիներով զարդարել այդ քաղաքը: Եւ ահայտ տեղի համար այդ ժամանակներում տեղի ունեցած է Պորինացիին այժեան անունները Պ. Պալաթեանն այնպէս է խօսուում, որ կարծես մեր մատենագիրները Հայաստանում եղած բոլոր հին ու նոր աշխարհագրական անունները գրել են և նոցա բոլոր գրածներն իրեն քաջ ծանօթ են, և կամ երբ մի յոյն մատենագիր Սուբիդաս պատահաբար գրում է Նոր Բաղաբի շինուելու մասն և չէ յիշում ուրիշ անուններ ուրեմն և գոյութիւն չեն ունեցել այդ անունները և կամ իրր թէ նա պ. Պալաթեանը հաստատ գիտէ, որ Հռոմայեցիք այդ Նոր Բաղաբը հիմնել են մի ամայի երկրում, և չէր կարող մի Վարդգէսի աւանի մօտին կամ տեղում շինուած լինել: Կարծես պատմութեան մէջ քիչ են պատահուում այդպիսի դէպքեր, որ հին գիւղի տեղում կամ մօտին շինուած են նոր գիւղ, կամ նոր քաղաք. ժողովուրդը մի աս ժամանակ պահում է հին անունը և նոր գիւղի կամ քաղաքի վրայ մինչև Նոր անունը մոռացութեան է տալիս հին անունը: Այսպէս և Նոր Բաղաբ անունը կարող էր յետ մնել Վարդգէսի աւան անունը, իսկ Վաղարշապատ անունը այժմ մոռացութեան է տուել և Նոր Բաղաբ անունը: ¹

1. Կրննեմ պ. Խաչատրեան և ընթերցողներ, որ այսպիսի սարսական բաների մասին եմ գրում: Բայց պ. Խաչատրեանին կարող էիմ յիշցնել, որ ինչպիսի իւր ծածօր Բաղաբ Արևմտահայաստանի և ընդ որոշումն են լինած 1831 թուին հին Գլուխի կամ Կուսայրի մօտ բայց ժողովուրդը դեռ պահում է Գլուխ անունը, քակտե և քականուրեան մէջ, բացի հետազոտիչից, որքան զիմն, միայն Արևմտահայաստանի յիշում: Գ. Խաչատրեանի հայրենի Բաղաբի հետ յիշեմք և մեր հայրենի գիւղը Թաղաբից (—Նոր գիւղ), որ նոյն ժամանակներում շինուած է հին Առաջապատ անունի տեղի մօտ, բայց դեռ ժողովուրդը այս և՛որ Թաղաբիցի վրայ պահում է հին անունն են՝ Աստապատ, այս և՛ նոյն իսկ մի գոյց այս գիւղի հիմնադրութեան և անուան համար, իր քե Ս. Վարդան Մարտիրոսեանի մարմնն Առաջապատի դաշտից այստեղ են բերած ու պատած, ուստի և՛ գիւղի անունը կոչուում է Աստապատ: Բայց այդ Թաղաբիցը (—և՛որ դէպը) շինուած է Ժ. Գառնու, կաս պ. Խաչատրեանը, և՛ ուստաց բոլոր Բաղաբիցի վրայ լիայ Աստապատ անունը, այն միայն Թաղաբիցի պէ՛ էր բերեալն՝ Տաղաբից, — ուրեմն սուս է և՛ սար

Հրեց գերութիւն մեծն Տիգրանի ծնունդ:—
 Պորինացիին գրում է թէ Վարդգէսի աւանում «Տիգրան միջին յարշակունեաց նստոյց զհասարակ աւաջնոյ գերութեանն հրեից, որ եղև քաղաքադի զՎաճառօքս Ըստ պ. Պալաթեանի (եր. 336) այս հակառակ է Փաւստոս Բիւզանդի տուած արժանաւարտ տեղեկութիւններին, որովհետև նա լուսելով այն քաղաքները, որտեղ զետեղուած են եղել հրեայ գերիները, չէնց Վաղարշապատի մասին այդպիսի բան չէ ասում: Դարձեալ դատելու նոյն եղանակը Բայց Փաւստոսը սրտեղ է լուում այն աւելացնենք, բոլոր քաղաքները ուր հրեայ գերիները զետեղուած են եղել, Նա նկարագրում է միայն թէ ինչպէս պարսիկներն աւերում են հայոց ամբողջ երկիրը և յանուանէ յիշում է մի քանի քաղաքներ և այն տեղերից տարած հայ և հրեայ գերիներն ու նոցա թիւը: Այս են.

Արտաշատ 9000 տուն երգ հրեայս և 40 երգ հայ, Վաղարշապատ ինն և՛ տասն երգս հազար, (=19 երգս 1000). Երուանդաշատ 20000 հայ և երգս 30000 հրեայ, Զարեհաւան 5000 երգ հայ և 8000 երգ հրեայ, Զարիշատ 14000 երգ հրեայ և 10000 երգ հայս, Վան 2000 հայ և 18000 երգս հրեայս, Նախճաւան 2000 հայս 2000 և հրեայս երգս 16000:

Ինչ կրկարծէ այս հաշիւը կարգաւոց յիտոյ ընթերցողը, արդեօք «չենց» Վաղարշապատի համար հրեայ գերիներ չէ յիշում Բիւզանդը, թէ չենց Վաղարշապատի համար աղաւաղուած է բնագիրը: Ինն և՛ տասն երգս հազար, ինչ հայ թէ հրեայ: Միթէ կարճ էր Բիւզանդն իւր այնքան կրկնութիւնների մէջ մի առ մի ասել թէ իւր յիշած քաղաքներից ամեն մէկից որքան հայ և որքան հրեայ են տարել և Վաղարշապատի համար չասել նոյն իսկ թէ այնտեղից ինչ են տարել գերի, հայ թէ հրեայ: Եւ վերջապէս տեսէք բառերի դասաւորութիւնը, ինն և՛ տասն երգս հազար, Միթէ պարզ չէ, որ այստեղ

Բայ Աստապատ անունը, և՛ շինողի Ս. Վարդանի այստեղ քաղուելու շրջնն են: Եյս յ՛ ասում արդեօք պ. Խաչատրեանը և՛ Վարդգէսի աւանի համար:

ամբողջ բառերն պահաս և երկու թիւ է յիշուած եղել: Պ. Խալաթեանն աղաւաղուած բնագիրն էլ յօգուտ իրեն բանեցնել զիսէ: Սակայն պ. Խալաթեանի մեթոդն երկայրի սուր է. այն ժամանակ նա կասէր: Խորհնացին Վաղարշապատի հրէական գերութիւնը Բիւզանդից է վերցրած: Որովհետեւ առանց այն էլ նա գրում է. «Զնայելով Փաւստոսին հակասելուն մեր պատմագիրն ակամայ պահում է Փաւստոսից առած մանրամասնութիւններ հրէից գերութեան մասին»: Եւ այդ «մանրամասնութիւնները» որոշում է նա իւր աշխատութեան երկրորդ մասում (եր. 80): Խորհնացի. «Երում Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն հրէիցն»:— Բիւզանդ. «Զայս ամենայն բազմութիւն չրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացեոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զբահանայպետն չրէից զՀիւրկանդնոս զառաջին ժամանակաւ»: . . . Հրեայոց զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունոյ. . . .

Եւ գրտէք ինչու է դժած Խորհնացու և Բիւզանդի մէջ առաջինն բառերն ևս թէպէտ և նոյն իմաստը չունին: Որպէս զի ցոյց տայ որ այդ առաջին գերութիւնն ասածն էլ Խորհնացին Բիւզանդից թելադրուած է սարքել: Եւ այս ինչ առաջին գերութիւն է, որի մասին ասես թէ հարեանցի (?) յիշում է Խորհնացին, բացականում է պ. Խալաթեանը և ապա հարցնում. «Ե՞րբ է եղել երկրորդ գերութիւնը և ո՞ւմ ձեռով—մեզ ոչինչ յայտնի չէ: Անշուշտ պ. Խալաթեանին կարող է յայտնի չլինել զի նա Խորհնացին կարդացել է և շատ անգամ կարդացել բայց ինչպէս ամեն մահիանացու մտացել է, որ Խորհնացին նոյն Արշակունի միջին Տիգրանի համար երկու հրէական գերութիւն է պատմում: Ես իսկ ի գրքի ժգ. զլիսի մէջ. Առեալ գերի բազում ի հրէիցն, նստի շուրջ զՊաղոմայից քա-

ղաքաւ: և այնուհետեւ ժգ. զլիսի մէջ այս գերութեան համար գրում է. «Իսկ թաղաւորն Հայոց Տիգրան գերութիւն հրէիցն նստացեալ ի յԱրմաւիր և յաւանին Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյ: Այս առաջին գերութիւնն է, որ չգիտէ Բիւզանդ: Ապա երկրորդ գերութիւնը որ Բիւզանդինն է, պատմում է ժթ. զլիսի մէջ. «Եւ Պաղեստինացի Բիւզանդից և Արտաշիլի և առաքեալ սպաստակի Պաղեստինէ, և գերութիւն Հիւրկանու քահանայպետի և այլ բազմութեան հրէից: Եւ զՀիւրկանոս կայեալ ածեն Տիգրանայ հանդերձ գերութեամբն և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զԲրեայն չրէից. . . . ի քաղաքն Եւփրատայ: Ահա և երկրորդ գերութիւնը յԹէ Խորհնացին Բիւզանդից օգտուած է, այս երկրորդ արշաւանքի համար միայն կարող է լինել. և գուցէ Խորհնացուն խարոզներից մէկն էլ հենց այդ արժանահաստա Բուզանդն է եղել, որ մեր պատմագիրը Տիգրանին կենդանի է պահում և մասնակից պարթեաց այդ արշաւանքին Պաղեստին և Հիւրկանոսին Հայաստան է գերի բերում, մինչդեռ նա պարթեաց գերին է եղել և Բաբելոն տարուել ըստ Թովսեպոսի:

Տիգրանի առաջին արշաւանքը Պաղեստին և Պաղոմայից քաղաքը պաշարելը որ պատմական իրողութիւնն է, Խորհնացին կարող չէ Բիւզանդից առած լինել, այլ ուրիշ արբիւրից: Այս արշաւանքի գերիներն ահա— և եթէ Տիգրան հրեայ գերիներ է բերել, այն ժամանակ միայն եղած կարող է լինել—նա բնակեցնում է Վարդգէսի աւանում: Այս առանի հրէական գերութիւնը Խորհնացին կարող է հարկաւ դրաւոր արբիւրից ևս առած լինել: Ես աղբիւր չէ յիշում: Բայց մենք աւելի հաւանական ենք համարում, որ նա առած լինի նոյն Վարդգէսի աւանի առասպելից: Առասպելի բովանդակութիւնը պատմելու ձեռն այդ չէ մերժում: «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն. . . . կռել կոփել զգուռն Երուանդայ արքայի: Այս Երուանդ առաջինն է սակաւկեացն, որ ի հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի շինեաց զաւանս զայս: Երում Տիգրան միջին յարշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն չրէից, որ

1. Աղաւաղուած է հաւաստու ևս Արտաշեսի մասոյցի ևս անհատացիէ: որ այդ սահմանից 9000 երդ ճրեայ գերի օսակիւն ևս հայ միայն 40 երդ:

եղև քաղաքագիւղ վաճառօքս Այս ամբողջից մենք ընդգծած բառերը միայն Խորենացու բացատրութիւններն և յաւելումներն ենք համարում, մնացածն առասպելի բովանդակութիւն:

Երուանդ ևւ Մեծն Տիգրան:— «Ի՞նչպէս կարող էր Խորենացին իմանալ, որ երգի՝ մէջ յիշուած Երուանդը յատկապէս Երուանդ առաջին սակաւակեացն է: Տիգրան Ա.ի հայրը և ոչ թէ Երուանդ Բ.ս հարցնում է պ. Խալաթեանը: Ետտ հեշտ կերպով բաւական էր, որ առասպելի մէջ յիշուած լինէր «առաջինն» «հին» «բնիկ թագաւոր» բառերից մէկը, և մեր պատմագիրն այդ Երուանդին պիտի նոյնացնէր իւր առաջին բնիկ թագաւոր Երուանդի հետ, և ոչ թէ Արշակունի Երուանդի հետ. ճիշտ ինչպէս երգի Մեծն Տիգրանին դրած է բնիկ թագաւորների ցանկի մէջ: Իսկ Վարդգէսի աւանի առասպելի մէջ յիշուած Տիգրանին, թէկուզ սա ևս բնիկ բառը կրէր, մեր պատմագիրն անհրաժեշտօրէն պիտի տարբերէր Երուանդեան Տիգրանից և նոյնացնէր Արշակունի միջին Տիգրանի հետ, քանի որ իւր պատմական ծանօթութիւններով միջին Տիգրան Արշակունին է արշաւել Պարդեստին և հրեայ գերիներ բերել: Սակայն առասպելն աւելի ճշտութիւն է պատհել, քան Խորենացին: Մենք գիտենք Խորենացին առնելով մի գրաւոր աղբիւրից, որ ժողովրդական երգից է ծագում, իւր Հայկազն Տիգրանի (=Մեծն Տիգրանի) հայր դնում Երուանդ սակաւակեաց, «խարտեաչս այս և աղերիկ ծայրիւ հերաց Երուանդեանն Տիգրան» (Ա. իդ.): Իսկ այստեղ Վարդգէսի առասպելի մէջ պատմում է, որ նոյն Երուանդ արքայի քոյրն առնում է Վարդգէս մանուկն և շինում է իւր անունով աւանը և անմիջապէս թէ Տիգրանը (=Մեծն Տիգրան) այնտեղ բնակեցնում է հրեայ գերիներ և աւանը մեծանում է: Ուրիշ խօսքով աւանը շինւում է Մեծն Տիգ-

րանի հօրաքրոջ ամուսնու ձեռով, բայց Տիգրանն ևս մասնակից է լինում, բնակեցնելով այնտեղ հրեայ գերիներ, որ միևնոյն թէ աւանն ըստ առասպելին իսկապէս շինւում է Մեծն Տիգրանի օրով: Խորենացին միայն սխալ մեկնելով այդ Երուանդին ու Մեծն Տիգրանին, որ հայր ու որդի են ըստ առասպելին, բաժանում հեռացնում է իրարուց, մէկին թողնելով երգի բնիկ Մեծն Տիգրանի հայր, իսկ միւսին որ նոյն Մեծն Տիգրանն է, նոյնացնելով իւր Արշակունի միջին Տիգրանի հետ: Այսպէս այն հանգամանքը, որ երկու տարբեր առասպելի մէջ ևս, հակառակ Խորենացու բացատրութեան, Երուանդ և Տիգրան (=Մեծն Տիգրան երկու դէպքում էլ, հակառակ Խորենացու բացատրութեան) անունները միասին են դուրս գալիս, եթէ մի կողմից վկայում է երկու առասպելների վաւերականութեանը, միւս կողմից ցոյց է տալիս նաև, որ ժողովրդական առասպելի մէջ հենց Մեծն Տիգրանի հայր համարուել է Երուանդ: Այս անունով հայոց թագաւոր մեզ յայտնի չէ, բայց Երուանդ անունը կարող էր դործածական լինել հին հայոց մէջ: Դ. դարում Բ. ա. Հայաստանի շատ սատրապներ կրել են Երուանդ անունը, և նոյն իսկ Հայաստանի վերջին պարսկական (?) սատրապն էլ (190 թ. մտերբը, Արտաշէսի և Զարեհի թագաւորութուց առաջ) կրում է Երուանդ անունը, որին թագաւոր է անուանում Ստրաբոնը: 2 Իսկ Մեծն Տիգրան այդ ժամանակից շատ հեռու չէ (ծնուած մօտ. 140. թ. Բ. ա. ըստ Ռեյնսքի): 3 Անշուշտ, մենք չենք պնդում, որ Մեծն Տիգրանի հայրը, որի անունը պատմութեան մէջ հաւաստեաւ յայտնի չէ, Երուանդ կոչւած լինի. բայց մի անբնական բան էլ չէր լինիլ, որ ժողովրդական առասպելը պահած լինէր ճշտութեամբ այդ անունը: Երուանդ

1. Hübschmann Arm. Gramm. I. ևր. 40.
2. Халат. Арм. Эпосъ. ևր. 234 հօ: «Վերջին պատկանական սատրապ» կոչուեալ մեզ համար անհասկանալի է: Բնակի որ այդ ժամանակ պարսիկները չէին իշխում Հայաստանին: Դորախտարտ թագաւոր մեռի օակ լուծիմի տեւի պարսկական ծագման պատճառով այդ երուանդը պարսկական սատրապ է կոչուում:
3. Գարագաշեան, Բնկ. պատմ. Հայոց, Բ. ևր. 131.

1. Չգիտեմ պ. Խալաթեանը որտեղից գիտէ որ Վարդգէսի վրաց էր. ք. և նշել ևս ոչ լոկ գրոյց: Խորենացին «յառասպելն առնել» է դնում: Ոչ «առասպել» ևս ոչ «առնել» բառից դէռ կարելի չէ եզրակացնել ք. այդ առասպելը երգուել է ևս ոչ ք. պատմութիւն:

դէպս) մեզ համար այն նշանակութիւն ունի որ մի առասպելի մէջ Մեծն Տիգրանի հայրն է Սրուանդ) և միւս առասպելը Վաղարշապատի սկիզբը կապում է Մեծն Տիգրանի այս հօր և հենց իրեն Մեծն Տիգրանի հետ:

Այս առասպելի մէջ կարող է պահուած լինել բուն պատմական յիշողութիւն, թէ Վարդգէսի աւանը շինուած է Մեծն Տիգրանի և իւր հօր օրով Սահայն առասպելը հաւաստեալ առանձին արժէք ու նշանակութիւն է ստացած և զարգացած յետոյ՝ երբ Վարդգէսի աւանը Նոր Բաղաք և Վաղարշապատ անունով հայաստանի մայրաքաղաքն էր: Միւս կողմից առասպելն ամբողջապէս կարող է այս ժամանակներում ևս ստեղծուած լինել և կապուած ժողովրդական առասպելի յայտնի և սիրելի դիւցազն Մեծն Տիգրանի և իւր հօր անուանը: Ընդհանրապէս լինի այս առասպելի սկիզբը պատմական յիշողութիւն ունենայ իւր մէջ թէ Վաղարշապատի փառքը բարձրացնելու համար միայն յետոյ ստեղծուած լինի այդ երկրորդական է՝ մեզ համար միայն այն նշանակութիւն ունի որ Վարդգէսի աւանի առասպելը ժողովրդական է և հակառակ Խորենացու բացատրութեան պատկանում է Մեծն Տիգրանի առասպելի շրջանին:

Մ. Արեղեսան.



ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՐԵԱՆ

Անցեալ տարի հայկական լեռերէնը աւետեցին մեզ Մ. Մամուրեանի 50 ամեայ գործունէութեան անթիւ կատարուած յօրակաւնի մասին այս տարի արդէն՝ յունուարի 17-ին, զուժեցին նորա մահուան լուրը...

Մամուրեանի մահը մեր ազգի համար աննկատելի անցնել չի կարող. որովհետեւ եթէ ունինք մեր մէջ մի քանի վաստակաւոր մարդիկ նոցա զլիսաւոր աշխատաւորներէջ մկին էլ Մամուրեանն էր. այս վկայում են նորա բազմաթիւ և բազմարդիւն գործերը:

Մատթէոս Մամուրեանը ծնուել է 1 30թ. Զմիւռնիայում: Նորա ծնունդը ընկել Զմիւռնացի են եղել: Իր սկզբնական կրթութիւնը ստացել է Սիրայի Յունաց դպրոցում: Հարուստ եղել է ծննդավայրում՝ զանուած Մեսրոբեան վարժարանում և աւարտել է Պարիզ՝ Մուրատեան վարժարանում և այստեղ արդէն իրր աշակերտ նա աչքի է ընկել իւր տրտաւարդ ընդունակութիւններով: Պարիզի նշանաւոր անձանց ներկայութեամբ վարժարանում կատարուած մրցանակարարչութեան ժամանակ Մամուրեանը արժանացել է միջոցաւարձի խոհանարարի և շինի ճարտար. և այն զովարանական խօսքերին և հս չակաւոր բանաստեղծ Լամարտինը՝ նկատելով նորա մէջ ազգայ նշանաւոր մարդու յատկանիշները և նախատեսելով պատանի Մամուրեանի բեղմնաւոր գործնէութեան՝ փառաւոր ազգան գտնիներով պատկել է նորան: Աւսումն աւարտելուց յետոյ դայիս է Պոլիս և առանձնում է Արամեան վարժարանի տեսչութեան պաշտօնը: Այնուհետեւ դասնում է Պատրիարքարանի դիւանապետ միւլտոյն ժամանակ դրադուելով ամիրաների որդոց կրթութեամբ: սակայն նորա գործունէութիւնը Պոլսում երկարատե չի լինում: նա շուտով թողնում է Պոլիսը և գնում իւր սիրած հայրենիքը՝ Զմիւռնիայ ուր և հաստատուն հիւք է գնում իւր բեղմնաւոր աշխատութեան: Այստեղ նորան տեսնում ենք իրբե տեսուչ և ուսուցիչ իրբե հեղինակ ու թարգմանիչ, այլև իրր խմբագրապետ ու տպարանապետ Քսան ասրի Զմիւռնիոյ Մեսրոպեան և Հոխիսիմեան վարժարաններում տեսչութեան պաշտօն է վարել: միւլտոյն ժամանակ հետզհետեւ լոյս ընծայել բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական գրուածքներ, որոնց միայն վերնագիրները կ'ընկնէր այստեղ: որպէսզի դէթ մտաւոր զարգալար կարելի լինի կազմել այն աշխատաւոր մարդու անդուլ և արդիւնաւետ գործնէութեան մասին:

Ինքնուրոյն գրուածքներ.

1. Անդլիական Նամականի.
2. Առաջին ընթերցարան.